Հաստատված է՝
ԵՊՀ ՈՒԳԸ գիտական խորհրդի
23.04.2019 թ. 4-րդ նիստում
ԵՊՀ ՈՒԳԸ նախագահ՝ Վ. Շերենց
ԵՊՀ ՈՒԳԸ քարտուղար՝ Մ. Պետրոսյան

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

1. Սույն փաստաթուղթը սահմանում է ԵՊՀ ուսանողական գիտական ընկերության (այսուհետև՝ ՈՒԳԸ) և կառուցվածքային ստորաբաժանումների ընթացիկ աշխատանքների կազմակերպման և անցկացման ընթացակարգը՝ հիմք ընդունելով ԵՊՀ ՈՒԳԸ կանոնադրությունը (այսուհետև՝ Կանոնադրություն), որն ընդունվել է ԵՊՀ գիտական խորհրդի կողմից 21.06.2001 թ.-ին:

2. Համաձայն Կանոնադրության 3.6 կետի՝ ԵՊՀ ՈՒԳԸ ղեկավար մարմինը ՈՒԳԸ գիտական խորհուրդն է (այսուհետև՝ ԳԽ), որին ի պաշտոնե անդամակցում են ԵՊՀ ՈՒԳԸ նախագահը, նախագահի տեղակալը, քարտուղարը, ՈՒԳԸ հանձնաժողովների (Արտաքին կապերի, Ընդհանուր հարցերի, Թարգմանական հարցերի, Տեղեկատվական) նախագահները և ստորաբաժանումների ՈՒԳԸ-ների նախագահները: ԳԽ-ն պարտավոր է կիսամյակի ընթացքում գումարել նվազագույնը 6 նիստ, ընդ որում՝ առաջին նիստը պետք է գումարվի ոչ ուշ, քան ուսումնական տարվա առաջին կիսամյակի երկրորդ շաբաթվա ընթացքում: ԳԽ նիստը վավեր է, եթե դրան ներկա է անդամների կեսից ավելին: ԳԽ յուրաքանչյուր անդամ պարտավոր է ներկայանալ ԳԽ նիստերին, իսկ բացակայության և դրա պատճառների մասին պարտավոր է նախքան նիստը տեղեկացնել ԵՊՀ ՈՒԳԸ քարտուղարին: Հիմնավորման դեպքում ԵՊՀ ՈՒԳԸ նախագահը ԳԽ անդամի բացակայությունը կարող է համարել հարգելի: Հանձնաժողովների և ստորաբաժանումների ՈՒԳԸ նախագահները ԳԽ նիստերից իրավունք ունեն կիսամյակի ընթացքում հարգելի բացակայել առավելագույնը 2 անգամ: Ստորաբաժանման ՈՒԳԸ նախագահների բացակայության դեպքում նրանց պետք է փոխարինեն քարտուղարները: Նիստին ստորաբաժանման ՈՒԳԸ քարտուղարի մասնակցության մասին անհրաժեշտ է նախօրոք տեղեկացնել ԵՊՀ ՈՒԳԸ քարտուղարին: ՈՒԳԸ ԳԽ-ն կիսամյակի ընթացքում հանձնաժողովների և ստորաբաժանումների ՈՒԳԸ նախագահների 2 և ավելի անհարգելի բացակայությունների դեպքում օրակարգով նախատեսում է բաց քվեարկություն՝ ձայների պարզ մեծամասնության ապահովման դեպքում վերջիններիս հեռացնելով ՈՒԳԸ-ից:

3. Համաձայն Կանոնադրության 3.14 կետի՝ ԵՊՀ ՈՒԳԸ նախագահն ի պաշտոնե ներկայացնում է ՈՒԳԸ-ն, նախագահում է ԳԽ նիստերը, համակարգում է ՈՒԳԸ կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը, ստորագրում (անհրաժեշտության դեպքում՝ կնքում) է ԵՊՀ ՈՒԳԸ-ին առնչվող փաստաթղթերը (զեկուցագիր, տեղեկանք, բնութագիր, հուշագիր և այլն), հետևում է Կանոնադրությամբ և Աշխատակարգով սահմանված կետերի պահպանմանը: ՈՒԳԸ նախագահը պատասխանատու է «ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու» երիտասարդական պարբերականի խմբագրական կազմի ձևավորման և տպագրության

գործընթացի պատշաճ կազմակերպման համար: Համաձայն Կանոնադրության 3.10 կետի՝ ԵՊՀ ՈՒԳԸ նախագահը պաշտոնավարման 3 տարի ժամկետով ընտրվում է ԵՊՀ գիտական խորհրդի կողմից՝ ԵՊՀ ռեկտորի ներկայացմամբ: Ելնելով ՈՒԳԸ ԳԽ փակ քվեարկության արդյունքներից՝ ՈՒԳԸ նախագահի թեկնածուներին[1] (առավելագույնը՝ 2) ԵՊՀ ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի երաշխավորությամբ[2] ԵՊՀ ռեկտորին է ներկայացնում ԵՊՀ ՈՒԳԸ նախագահը: ՈՒԳԸ նախագահը չունի վերընտրվելու իրավունք: Համաձայն Կանոնադրության 3.15 կետի՝ ՈՒԳԸ նախագահը տարեկան հաշվետվությամբ հանդես է գալիս ԵՊՀ գիտական խորհրդում: ՈՒԳԸ նախագահը կիսամյակային և տարեկան հաշվետվությամբ հանդես է գալիս նաև ԵՊՀ ՈՒԳԸ գիտական խորհրդում: ԵՊՀ ՈՒԳԸ կառուցվածքային ստորաբաժանումների ցանկացած ծրագիր ֆինանսավորվում է ԵՊՀ ՈՒԳԸ նախագահի համաձայնությամբ: ԵՊՀ ՈՒԳԸ նախագահն իրավունք ունի միաձայն որոշումներ կայացնելու ՈՒԳԸ Կանոնադրությամբ և Աշխատակարգով չսահմանված դեպքերում միայն այն դեպքում, երբ ՈՒԳԸ-ին առնչվող խնդիրը պահանջում է հրատապ լուծում և տվյալ պահին անհնար է գումարել ԵՊՀ ՈՒԳԸ ԳԽ նիստ: ՈՒԳԸ նախագահը մասնակցում է ստորաբաժանումների ՈՒԳԸ նախագահների և քարտուղարների ընտրությանը և ունի ընտրական ձայնի իրավունք: ՈՒԳԸ նախագահը կարող է մասնակցել ստորաբաժանումների ՈՒԳԸ գիտական խորհրդատուների ընտրությանը, սակայն չունի ընտրելու իրավունք:

4. Համաձայն Կանոնադրության 3.16 կետի՝ ԵՊՀ ՈՒԳԸ նախագահի տեղակալը նախագահի բացակայության դեպքում ստանձնում է նրա լիազորությունները, համակարգում է ՈՒԳԸ կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը: ՈՒԳԸ նախագահի տեղակալը[3] պաշտոնավարման 2 տարի ժամկետով և 1 անգամ վերանշանակվելու իրավունքով նշանակվում է ԵՊՀ ՈՒԳԸ նախագահի, երաշխավորվում՝ Ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի, հաստատվում՝ ԵՊՀ ռեկտորի կողմից՝ համաձայն համապատասխան հրամանի: ՈՒԳԸ նախագահի տեղակալը ՈՒԳԸ ԳԽ՝ յուրաքանչյուր կիսամյակի ամփոփիչ նիստում հանդես է գալիս կատարած աշխատանքների վերաբերյալ հաղորդմամբ: Նախագահի տեղակալը նախագահին փոխարինելու դեպքում կարող է ունենալ օգնական, որը նշանակվում է ԵՊՀ ՈՒԳԸ նախագահի կողմից՝ նախագահի տեղակալի առաջարկով: ՈՒԳԸ նախագահի տեղակալը մասնակցում է ստորաբաժանումների ՈՒԳԸ նախագահների և քարտուղարների ընտրությանը, սակայն չունի ընտրական ձայնի իրավունք:

---

[1] ԵՊՀ ՈՒԳԸ նախագահի թեկնածուն պետք է համապատասխանի հետևյալ չափանիշներին՝ ունենա ակադեմիական բարձր առաջադիմություն (նվազագույն ՄՈԳ՝ 19), տպագրված գիտական հոդված, ՈՒԳԸ ԳԽ-ի առնվազն 1.5 ուսումնական տարվա անդամակցություն և կարգավիճակ (բակալավրիատի առկա համակարգի 4-րդ կուրս, մագիստրանտ, ասպիրանտ):

[2] ԵՊՀ ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնը ՈՒԳԸ նախագահի թեկնածուին կարող է չերաշխավորել միայն այն դեպքում, երբ վերջինս չի համապատասխանում ՈՒԳԸ նախագահի թեկնածուներին ներկայացվող չափանիշներին:

[3] ՈՒԳԸ նախագահի տեղակալի թեկնածուն պետք է համապատասխանի հետևյալ չափանիշներին՝ ունենա ակադեմիական բարձր առաջադիմություն (նվազագույն ՄՈԳ՝ 18), տպագրված գիտական հոդված, ՈՒԳԸ ԳԽ-ի առնվազն 1 ուսումնական տարվա անդամակցություն և կարգավիճակ (բակալավրիատի առկա համակարգի 3-րդ և 4-րդ կուրս, մագիստրանտ, ասպիրանտ):

5. Համաձայն Կանոնադրության 3.17 կետի՝ ԵՊՀ ՈՒԳԸ քարտուղարը ղեկավարում է քարտուղարության աշխատանքները (կազմում է գիտաժողովի ծրագրեր, զեկուցագրեր, հանձնման-ընդունման ակտեր, տրամադրում է տեղեկանքներ, բնութագրեր և այլն): ՈՒԳԸ քարտուղարը[4] պաշտոնավարման 2 տարի ժամկետով և 1 անգամ վերանշանակվելու իրավունքով նշանակվում է ԵՊՀ ՈՒԳԸ նախագահի, երաշխավորվում՝ Ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի, հաստատվում՝ ԵՊՀ ռեկտորի կողմից՝ համաձայն համապատասխան հրամանի: Նա ԳԽ նիստի քարտուղարողը և ՈՒԳԸ քարտուղարների նիստի նախագահողն է: ԵՊՀ ՈՒԳԸ քարտուղարը պարտավոր է ԳԽ նիստից առնվազն 2 աշխատանքային օր առաջ տեղեկացնել օրակարգի մասին, իսկ նիստից հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում՝ էլեկտրոնային փոստի միջոցով ԳԽ անդամներին տեղեկացնել նիստի ժամանակ ընդունված որոշումների մասին՝ բացառությամբ ամփոփիչ և ընդլայնված նիստերի: Նա ըստ անհրաժեշտության ԳԽ յուրաքանչյուր նիստում հանդես է գալիս նախորդ նիստում ընդունված որոշումների կատարողականի վերաբերյալ հաղորդմամբ: ՈՒԳԸ քարտուղարը պատասխանատու է ՈՒԳԸ անդամների՝ ԵՊՀ ամբիոնների կողմից ներակայացվող երաշխավորագրերի, դեկանների կողմից հաստատված անդամակազմերի, կիսամյակային ծրագրերի և հաշվետվությունների, ինչպես նաև «ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու» երիտասարդական պարբերականի հոդվածների գրախոսությունների արխիվացման համար: ԵՊՀ ՈՒԳԸ քարտուղարը կարող է ունենալ օգնական, որը նշանակվում է ՈՒԳԸ նախագահի կողմից՝ քարտուղարի առաջարկով: ՈՒԳԸ քարտուղարը մասնակցում է ստորաբաժանումների ՈՒԳԸ քարտուղարների ընտրությանը և ունի ընտրական ձայնի իրավունք:

6. ԵՊՀ ՈՒԳԸ-ն ունի մշտական 4 հանձնաժողով՝ Արտաքին կապերի, Ընդհանուր հարցերի, Թարգմանական հարցերի, Տեղեկատվական: Հանձնաժողովների կազմը համալրվում է ՈՒԳԸ ստորաբաժանումների նախագահների կողմից ՈՒԳԸ 1-ական անդամի առաջադրմամբ: Հանձնաժողովների նախագահներին[5] պաշտոնավարման 1 տարի ժամկետով և 1 անգամ վերընտրվելու իրավունքով ընտրում է ՈՒԳԸ ԳԽ-ն՝ ձայների պարզ մեծամասնությամբ: Հանձնաժողովների նախագահներն ՈՒԳԸ ԳԽ՝ յուրաքանչյուր կիսամյակի ամփոփիչ նիստի ժամանակ հանդես են գալիս կատարած աշխատանքների վերաբերյալ հաղորդմամբ: Հանձնաժողովների նախագահների կիսամյակային գործունեությունն ՈՒԳԸ ԳԽ-ն գնահատում է «գերազանց», «գերազանց վերապահումով», «լավ», «բավարար» կամ «անբավարար»: Հանձնաժողովի նախագահի գործունեությունն «անբավարար» գնահատելու դեպքում ՈՒԳԸ ԳԽ-ն ձայների պարզ մեծամասնությամբ կարող է հանձնաժողովի նախագահին հեռացնել զբաղեցրած պաշտոնից, եթե քվեարկությունն իրականացվում է ամփոփիչ նիստի ընթացքում:

---

[4] ՈՒԳԸ քարտուղարի թեկնածուն պետք է համապատասխանի հետևյալ չափանիշներին՝ ունենա ակադեմիական բարձր առաջադիմություն (նվազագույն ՄՈԳ՝ 18), տպագրված գիտական հոդված, ՈՒԳԸ ԳԽ-ի առնվազն կես ուսումնական տարվա անդամակցություն և կարգավիճակ (բակալավրիատի 3-րդ և 4-րդ կուրս, մագիստրանտ, ասպիրանտ):

[5] ՈՒԳԸ հանձնաժողովի նախագահի թեկնածուն պետք է համապատասխանի հետևյալ չափանիշներին՝ ունենա ակադեմիական լավ առաջադիմություն (նվազագույն ՄՈԳ՝ 16), տպագրված գիտական հոդված, ՈՒԳԸ ԳԽ-ի առնվազն կես ուսումնական տարվա անդամակցություն և կարգավիճակ (բակալավրիատի առկա համակարգի 3-րդ և 4-րդ կուրս, մագիստրանտ, ասպիրանտ):

6.1 ԵՊՀ ՈՒԳԸ արտաքին կապերի հանձնաժողովի նախագահը պատասխանատու է տեղական և արտասահմանյան բուհերի և գիտահետազոտական կենտրոնների հետ գործընկերային հարաբերությունների հաստատման համար: Հանձնաժողովի նախագահը ՈՒԳԸ ղեկավար մարմնի և ստորաբաժանումների կողմից կազմակերպվող խոշոր գիտաժողովներին, համաժողովներին և աշխատաժողովներին ներգրավում է արտաքին լսարանին, հրավիրում արհեստավարժ բանախոսների, հետևում է ՈՒԳԸ հուշագրային պարտավորությունների պատշաճ կատարմանը, ՈՒԳԸ նախագահի բացակայության դեպքում գլխավորում է ՈՒԳԸ պատվիրակությունը գործընկեր կառույցների միջոցառումների ժամանակ: Նպատակահարմարությունից ելնելով՝ հանձնաժողովի նախագահը համագործակցում է ԵՊՀ միջազգային համագործակցության և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորի, ԵՊՀ պատմության թանգարանի, Հյուրերի տան, ուսումնաարտադրական բազաների և ավտոպարկի հետ՝ կատարելով ՈՒԳԸ գործունեությանն առնչվող այլ գործառույթներ (ՈՒԳԸ միջոցառումների արտասահմանյան մասնակիցների ընդունում և ճանապարհում, կեցավայրի ամրագրում, սննդի ապահովում և այլն):

6.2 ԵՊՀ ՈՒԳԸ ընդհանուր հարցերի հանձնաժողովի նախագահը մասնակցում է ՈՒԳԸ ընթացիկ աշխատանքների կազմակերպմանը, ՈՒԳԸ ստորաբաժանումներում իրականացնում է միջոցառումների որակի և մասնակցության մշտադիտարկում, անհրաժեշտության դեպքում աջակցում է ՈՒԳԸ ստորաբաժանումների միջոցառումների պատշաճ իրականացմանը, վերահսկում է ՈՒԳԸ պահեստն ու գրադարանը, ստորաբաժանումներին ապահովում է գույքով, յուրաքանչյուր կիսամյակ կազմում է ՈՒԳԸ աշխատասենյակի հերթապահության գրաֆիկ, հետևում է ՈՒԳԸ-ին պատկանող համակարգչային տեխնիկայի սարքինությանը, նպատակահարմարությունից ելնելով՝ համագործակցում է ԵՊՀ ընդհանուր հարցերի գծով պրոռեկտորի, Գնումների պլանավորման վարչության հետ՝ կատարելով ՈՒԳԸ գործունեությանն առնչվող այլ գործառույթներ:

6.3 ԵՊՀ ՈՒԳԸ թարգմանական հարցերի հանձնաժողովի նախագահը պատասխանատու է ՈՒԳԸ գործունեությանն առնչվող փաստաթղթերի (բնութագիր, տեղեկանք), խոշոր միջոցառումների, նորությունների և հայտարարությունների ռուսերեն և անգլերեն որակյալ թարգմանության, ՈՒԳԸ ղեկավար մարմնի կողմից կազմակերպվող միջազգային գիտական նստաշրջանների ընթացքում բաժանմունքներում ռուսերենի և անգլերենի թարգմանիչների ներգրավման և համաժամանակյա թարգմանության կազմակերպման համար: ՈՒԳԸ թարգմանական հարցերի հանձնաժողովի նախագահն ի պաշտոնե ներգրավվում է «ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու» գիտական պարբերականի կազմման և հրատարակման աշխատանքներին՝ որպես օտարալեզու հոդվածների խմբագիր և ռուսերեն ու անգլերեն ամփոփագրերի սրբագրիչ: Նպատակահարմարությունից ելնելով՝ կատարում է ՈՒԳԸ գործունեությանն առնչվող այլ գործառույթներ:

6.4 ԵՊՀ ՈՒԳԸ տեղեկատվական հանձնաժողովի նախագահը պատասխանատու է սոցիալական ցանցերում ՈՒԳԸ գործունեության լուսաբանման, հանրային հետազոտությունների և ՈՒԳԸ պաշտոնական կայքին առնչվող աշխատանքների պատշաճ իրականացման համար (նորությունների, հայտարարությունների, կենսագրությունների, տարեկան հաշվետվությունների, պարբերականների տեղադրում): Նպատակահարմարությունից ելնելով՝ հանձնաժողովի նախագահը համագործակցում է ԵՊՀ հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության հետ՝ կատարելով ՈՒԳԸ գործունեությանն առնչվող այլ գործառույթներ (լուսաբանման հայտերի

կազմում, տեսանկարահանում, լուսաբանվող միջոցառումների հայերեն տեքստերի խմբագրում և այլն):

7. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ՈՒԳԸ-ն ԵՊՀ ՈՒԳԸ կառուցվածքային ինքնավար ստորաբաժանում է, որն ունի սեփական կանոնադրությունը՝ հաստատված ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի Գիտական խորհրդի կողմից: ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ՈՒԳԸ նախագահը համակարգում է մասնաճյուղի ՈՒԳԸ կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը: ԵՊՀ ՈՒԳԸ ԳԽ անդամների քվեարկությամբ՝ ձայների պարզ մեծամասնությամբ, կարող է ընտրվել ԳԽ անդամ: ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ՈՒԳԸ նախագահը յուրաքանչյուր կիսամյակ մասնակցում է ԵՊՀ ՈՒԳԸ ընդլայնված նիստին, իսկ ԳԽ ամփոփիչ նիստի ընթացքում հանդես է գալիս կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությամբ:

8. ԵՊՀ ստորաբաժանումների ՈՒԳԸ-ները կարող են իրականացնել միայն Կանոնադրությունից բխող նպատակներին և խնդիրներին համապատասխան ծրագրեր և միջոցառումներ, որոնց մշակման և ընթացիկ հարցերի կարգավորման նպատակով հրավիրվում են նիստեր: Ստորաբաժանման ՈՒԳԸ-ն պարտավոր է կիսամյակի ընթացքում գումարել առնվազն 4 նիստ, ընդ որում՝ առաջին նիստը պետք է գումարվի ոչ ուշ, քան ԳԽ առաջին նիստից 7 օր անց: Առաջին և երկրորդ նիստերի արձանագրությունները երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային տարբերակով պետք է ներկայացվեն ԵՊՀ ՈՒԳԸ քարտուղարին: Ստորաբաժանման ՈՒԳԸ-ն յուրաքանչյուր կիսամյակի 2-րդ նիստի ժամանակ պարտավոր է հաստատել ստորաբաժանման ՈՒԳԸ գործունեության կիսամյակային ծրագիրը՝ արձանագրությանը կից տպագիր և էլեկտրոնային տարբերակով ներկայացնելով ԵՊՀ ՈՒԳԸ քարտուղարին: Ստորաբաժանման ՈՒԳԸ նիստերում ցանկացած որոշում ընդունվում է ՈՒԳԸ կազմի քվեարկությամբ՝ ձայների պարզ մեծամասնությամբ: ՈՒԳԸ ստորաբաժանումը համարվում է ձևավորված, եթե անդամակցում են առնվազն 3 ուսանողներ (ՈՒԳԸ նախագահ, քարտուղար, Տեղեկատվական հանձնաժողովի պատասխանատու):

9. ԵՊՀ ստորաբաժանման ՈՒԳԸ նախագահի[6] և քարտուղարի[7] փակ ընտրությունը կազմակերպվում է ԵՊՀ ՈՒԳԸ նախագահի և ստորաբաժանման ՈՒԳԸ գործող նախագահի, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ ստորաբաժանման ՈՒԳԸ գիտական խորհրդատուի հետ փոխհամաձայնությամբ: ՈՒԳԸ ստորաբաժանման նախագահն ու քարտուղարն առաջադրման կամ ինքնաառաջադրման կարգով ընտրվում են ստորաբաժանման ՈՒԳԸ անդամների քվեարկությամբ՝ ձայների պարզ մեծամասնությամբ: Նշված պայմանը չբավարարելու դեպքում կազմակերպվում է նոր ընտրություն: Ընտրական նիստը նախագահում է ԵՊՀ ՈՒԳԸ նախագահը, վերջինիս բացակայության դեպքում՝ ԵՊՀ ՈՒԳԸ նախագահի տեղակալը: Ստորաբաժանման

---

[6] ՈՒԳԸ ստորաբաժանման նախագահի թեկնածուն պետք է համապատասխանի հետևյալ չափանիշներին՝ ունենա ակադեմիական լավ առաջադիմություն (նվազագույն ՄՈԳ՝ 15), նվազագույնը կես ուսումնական տարվա ՈՒԳԸ անդամակցություն և կարգավիճակ (բակալավրիատի առկա և հեռակա համակարգի 2-րդ, 3-րդ, 4-րդ կուրս, մագիստրանտ, ասպիրանտ, հայցորդ):

[7] ՈՒԳԸ ստորաբաժանման քարտուղարի թեկնածուն պետք է համապատասխանի հետևյալ չափանիշներին՝ ունենա ակադեմիական լավ առաջադիմություն (նվազագույն ՄՈԳ՝ 14), նվազագույնը կես ուսումնական տարվա ՈՒԳԸ անդամակցություն և կարգավիճակ (բակալավրիատի առկա համակարգի 2-րդ, 3-րդ, 4-րդ կուրս, մագիստրանտ):

ՈւԳԸ նախագահն ու քարտուղարն ընտրվում են պաշտոնավարման 2 տարի ժամկետով՝ 1 անգամ վերընտրվելու իրավունքով:

10. ԵՊՀ ստորաբաժանման ՈւԳԸ նախագահը ՈւԳԸ ստորաբաժանման նիստերի նախագահողն է, համակարգում է ՈւԳԸ ստորաբաժանման գործունեությունը, կազմակերպում է հոդվածների գրախոսության գործընթացը, ՈւԳԸ ԳԽ՝ յուրաքանչյուր կիսամյակի ամփոփիչ նիստի ընթացքում հանդես է գալիս կիսամյակի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությամբ՝ փաստաթղթի էլեկտրոնային տարբերակը նիստից 3 օր առաջ ուղարկելով ՈւԳԸ քարտուղարին: Ստորաբաժանման ՈւԳԸ նախագահը կարող է պաշտոնից հեռացվել կա՛մ ստորաբաժանման ՈւԳԸ անդամների, կա՛մ ՈւԳԸ ԳԽ անդամների քվեարկությամբ՝ ձայների որակական մեծամասնությամբ (պաշտոնից հեռացմանը հաջորդող 6 ամիսների ընթացքում ստորաբաժանման ՈւԳԸ նախկին նախագահը զրկվում է վերընտրման իրավունքից):

11. ԵՊՀ ստորաբաժանման ՈւԳԸ քարտուղարը ՈւԳԸ ստորաբաժանման նիստերի քարտուղարողն է: Նա պատրաստում է ստորաբաժանման ՈւԳԸ-ին առնչվող փաստաթղթերը, նպաստում է ստորաբաժանման ՈւԳԸ ընթացիկ աշխատանքներին, մասնակցում է միջոցառումների կազմակերպմանն ու համակարգմանը, ստորաբաժանման ՈւԳԸ նախագահի բացակայության դեպքում նշանակվում է ՈւԳԸ ստորաբաժանման նախագահի պաշտոնակատար՝ ստանձնելով նախագահի պարտականությունները: Ստորաբաժանման ՈւԳԸ քարտուղարը մասնակցում է ԵՊՀ ՈւԳԸ ԳԽ ամփոփիչ նիստին՝ ստորաբաժանման նախագահի բացակայության դեպքում հանդես գալով կատարած աշխատանքների վերաբերյալ հաղորդմամբ: Ստորաբաժանման ՈՒԳԸ քարտուղարը կարող է պաշտոնից հեռացվել ստորաբաժանման ՈւԳԸ անդամների քվեարկությամբ՝ ձայների որակական մեծամասնությամբ (պաշտոնից հեռացմանը հաջորդող 3 ամիսների ընթացքում ստորաբաժանման ՈւԳԸ նախկին քարտուղարը զրկվում է վերընտրման իրավունքից):

12. Ստորաբաժանման ուսանողներն ՈւԳԸ անդամակցության համար[8] պետք է երաշխավորվեն ԵՊՀ ամբիոնների/բաժինների վարիչների կողմից, իսկ անդամակազմը յուրաքանչյուր կիսամյակ պետք է հաստատվի ԵՊՀ ստորաբաժանման դեկանի/տնօրենի կողմից: Ստորաբաժանման ՈւԳԸ անդամները մասնակցում են ստորաբաժանման և ԵՊՀ ՈւԳԸ ընթացիկ աշխատանքներին ու միջոցառումներին, ընդգրկվում են ՈւԳԸ ծրագրերում, իրավունք ունեն՝ ստորաբաժանման ՈւԳԸ նախագահի միջոցով տեղեկացված լինելու ԵՊՀ ՈւԳԸ ԳԽ նիստերում ընդունված որոշումների մասին: Ստորաբաժանման ՈւԳԸ անդամները պարտավոր են մասնակցել ՈւԳԸ ընդլայնված, ստորաբաժանման ՈւԳԸ նիստերին և միջոցառումներին, որոնցից կիսամյակի ընթացքում անհարգելի 2 բացակայության դեպքում ենթակա են հեռացման ստորաբաժման ՈւԳԸ անդամների քվեարկությամբ՝ ձայների որակական մեծամասնությամբ (հեռացմանը հաջորդող 3 ամիսների ընթացքում ստորաբաժանման ՈւԳԸ նախկին անդամը զրկվում է վերստին անդամակցելու իրավունքից): Կիսամյակի ընթացքում ակտիվ գործունեություն ծավալած ՈւԳԸ անդամին խրախուսելու համար վերջինիս տվյալներն ՈւԳԸ ընդլայնված նիստից

[8] ՈւԳԸ անդամի թեկնածուն պետք է համապատասխանի հետևյալ չափանիշներին՝ ունենա ակադեմիական լավ առաջադիմություն (նվազագույն ՄՈԳ՝ 13) և կարգավիճակ (բակալավրիատի առկա և հեռակա համակարգի 1-ին կուրսի 2-րդ կիսամյակ, 2-րդ, 3-րդ, 4-րդ կուրս, մագիստրանտ):

առնվազն 7 օր առաջ ՈւԳԸ քարտուղարին ներկայացնում է ՈւԳԸ ստորաբաժանման նախագահը:

13. Ստորաբաժանման ՈւԳԸ-ն պարտավոր է. ա) ներքին փաստաթղթաշրջանառության իրականացման, կազմակերպվող միջոցառումների վերաբերյալ տեղեկատվության տարածման և Կանոնադրության ու Աշխատակարգի պահանջներին չհակասող այլ նպատակների իրագործման համար ունենալու էլեկտրոնային Gmail հասցե՝ sss բաղադրիչի պարտադիր ներառմամբ, բ) նախատեսվող միջոցառումից առնվազն 3 օր առաջ տեղեկացնել ԵՊՀ ՈւԳԸ ընդհանուր հարցերի հանձնաժողովի նախագահին՝ մշտադիտարկում անցկացնելու համար, գ) նախատեսվող խոշոր միջոցառումից առնվազն 3 օր առաջ տեղեկացնել ԵՊՀ ՈւԳԸ տեղեկատվական հանձնաժողովի նախագահին՝ լուսաբանման հայտ կազմելու և միջոցառումը համահամալսարանական միջոցառումների ամենշաբաթյա օրացույցում ընդգրկելու համար, դ) միջոցառման կազմակերպումից հետո ամենաուշը 2 օրվա ընթացքում ԵՊՀ ՈւԳԸ տեղեկատվական հանձնաժողովի նախագահին ներկայացնել միջոցառման լուսանկարները և լուսաբանման տեքստը:

14. ԵՊՀ ՈւԳԸ ԳԽ անդամները և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներն իրավունք չունեն ծավալելու ՈւԳԸ-ի նպատակների հետ առնչություն չունեցող, ԵՊՀ, ՈւԳԸ կանոնադրություններին հակասող կրոնական, քաղաքական և քարոզչական գործունեություն:

15. Ստորաբաժանումների ՈւԳԸ-ների՝ կիսամյակի ընթացքում կատարած աշխատանքը գնահատվում է կիսամյակային հաշվետվության հիման վրա՝ համաձայն վարկանիշային պահանջների՝

Որակավորումը	Հասարակագիտական և հումանիտար ստորաբաժանումներ	Բնագիտամաթեմատիկական և տեխնիկական ստորաբաժանումներ
	ՄԻԱՎՈՐՆԵՐ	
Գերազանց	100 և ավելի	80 և ավելի
Գերազանց վերապահումով	71-99	51-79
Լավ	41-70	31-50
Բավարար	1-40	1-30

Ծավալած գործունեության համար նախատեսված միավորները բաշխվում են հետևյալ կերպ.

ա) **դրական միավորներ՝**

1) Միջբուհական գիտաժողով (հասարակական և հումանիտար գիտություններ՝ 21-35 զեկուցում, բնագիտամաթեմատիկական և տեխնիկական գիտություններ՝ 12-20)՝ 20 միավոր,
2) Միջբուհական գիտաժողով (հասարակական և հումանիտար գիտություններ՝ 12-20 զեկուցում, բնագիտամաթեմատիկական և տեխնիկական գիտություններ՝ 7-11)՝ 16 միավոր,
3) Միջբուհական գիտաժողով (հասարակական և հումանիտար գիտություններ՝ 7-11 զեկուցում, բնագիտամաթեմատիկական և տեխնիկական գիտություններ՝ 4-7)՝ 12 միավոր,
4) Ֆակուլտետային գիտաժողով (հասարակական և հումանիտար գիտություններ՝ 12-20 զեկուցում, բնագիտամաթեմատիկական և տեխնիկական գիտություններ՝ 7-11)՝ 10 միավոր,
5) Ֆակուլտետային գիտաժողով (հասարակական և հումանիտար գիտություններ՝ 7-11 զեկուցում, բնագիտամաթեմատիկական և տեխնիկական գիտություններ՝ 4-6)՝ 8 միավոր,

6) Աշխատաժողով, համաժողով՝ 7-15 միավոր,
7) Գիտական հոդվածների կամ թեզիսների ժողովածուների հրապարակում/հրատարակում՝ 15 միավոր,
8) Օլիմպիադա, դատախաղ, սիմուլյացիոն խաղ՝ 6-10 միավոր,
9) Բանավեճ և մրցութային այլ միջոցառումներ՝ 5 միավոր,
10) Գիտաճանաչողական այց՝ 2-5 միավոր,
11) Սեմինար-քննարկում, կլոր սեղան, հանդիպում-դասախոսություն՝ 3-5 միավոր (ուսանողի բանախոսության դեպքում՝ 3-4 միավոր, ԵՊՀ դասախոսի բանախոսության դեպքում՝ 4-5 միավոր, միջազգային կազմակերպության ներկայացուցչի բանախոսության դեպքում՝ 5 միավոր),
12) Մասնագիտական ֆիլմի դիտում՝ 2 միավոր, կինոդիտում-քննարկում՝ 3 միավոր,
13) ՈւԳԸ անդամների կողմից ՈւԳԸ պարբերականից դուրս ՀՀ-ում հրատարակած գիտական աշխատանքներ՝ 2-3 միավոր (Scopus, Web of Scinece, РИНЦ՝ 4 միավոր),
14) Այլ միջոցառումներ և աշխատանքներ՝ 1-5 միավոր:

- Եթե 2 և ավելի ստորաբաժանումների ՈւԳԸ-ներ համատեղ կազմակերպում են միջոցառում, ապա նրանցից յուրաքանչյուրը գնահատվում է՝ ըստ համապատասխան միջոցառման ամբողջական միավորի:
- Կազմակերպման և անցկացման որակով միևնույն ձևաչափի այլ միջոցառումներից էապես և դրականորեն տարբերվելու պարագայում ԵՊՀ ՈՒԳԸ նախագահն իրավասու է միջոցառման սահմանված միավորին հավելել 1-3 միավոր:
- Այլ կառույցների հետ համատեղ կազմակերպված միջոցառումներն ստանում են տվյալ միջոցառման համար նախատեսված միավորը՝ հավելյալ 2 միավորով (ներֆակուլտետային գիտակազմակերպական միավորները այլ կառույց չեն համարվում):

բ) **բացասական միավորներ՝**

1) ԳԽ նիստից ստորաբաժանման ՈւԳԸ նախագահի ոչ հարգելի բացակայություն՝ 5 միավոր:
2) ԳԽ նիստից ստորաբաժանման ՈւԳԸ նախագահի ոչ հարգելի բացակայություն և վերջինիս փոխարեն նիստին քարտուղարի մասնակցություն՝ 2 միավոր:
3) ԳԽ նիստից ստորաբաժանման ՈւԳԸ նախագահի հարգելի բացակայություն՝ 3 միավոր:
4) ԳԽ նիստից ստորաբաժանման ՈւԳԸ նախագահի հարգելի բացակայություն և վերջինիս փոխարեն նիստին քարտուղարի մասնակցություն՝ 0 միավոր:
5) Սահմանված ժամկետում կիսամյակային գործունեության ծրագրի չներկայացում՝ 4 միավոր,
6) Սահմանված ժամկետում ՈւԳԸ ստորաբաժանման նիստի արձանագրության չներկայացում՝ 2 միավոր,
7) ԵՊՀ ՈւԳԸ ընդլայնված նիստից ստորաբաժանման ՈւԳԸ անդամների կեսից ավելիի բացակայություն՝ 4 միավոր,
8) ԵՊՀ ՈՒԳԸ գիտական խորհրդի յուրաքանչյուր որոշման չկատարում՝ 3 միավոր,
9) Ստանձնած պարտավորությունների ոչ լիարժեք կատարում՝ 1 միավոր:

«Գերազանց» և «գերազանց վերապահումով» գնահատական ստացած ՈւԳԸ ստորաբաժանումները ենթակա են խրախուսման, իսկ «անբավարար» կամ «բացասական միավոր» ստացած ՈւԳԸ ստորաբաժանման նախագահը կառույցից հեռացման՝ ըստ ԵՊՀ ՈւԳԸ նախագահի համապատասխան գրավոր հրամանի: